



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

289

Lucc

274

632.

2000

628.

632

2000

Հայ
274

632

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

ԿԵԱՆՔԻ ԴԱՍԼ

Թասմունաժիք



18

289

Թ. ի ժ ի ս
Տաւարի թքիաձէի, կապ. Ա. Մահտեսի-Յակոբեան
Սկրդէհսկայա փող. №1.

1904


ՀԱՅՐ ՎԻՃՄԱՅ

Дозволено цензурою 28 апреля 1904 г. Тифлесъ.

93611-62

28-273

274-2003



{735-2002}

Կ Ե Ա Ն Ք Ի Դ Ա Ս Ը

ես սիրում եմ վեհութիւնը
մարդկային տանշանքի:
ԱԼՓՐԵՒԹ-ԳՅԵ-ՎԻՆԻՒ

I

Մենք նոր աւարտել էինք համալսարանը, ևս և ընկերո՞ւ երկուամպէ էլ բժիշկ. տարիների յամառ աշխատանքներս վերջապէս պսակուեց յաջողութեամբ, մենք նորաւարտ բըժիշկներ էինք: Այս միաքը մեր սիրտը լըցնում էր և՛ հրճուանքով, և՛ հպարտութեամբ. կեանքը մեր առաջ բաց էր, ապագան ժլպտուն, վայելքների մի շարբ:

Մի փոքր հանգստանալու և մեր ապագայ անելիքի մասին մտածելու համար, մենք երկուսով էլ իմ հայրենի քաղաքը եկանք: Ընկերս տեղաւորուեց մի աժանագին հիւրանոցում, իսկ ես ծնողներիս մօտ:

Ցաջորդ օրը, երբ ես ընկերոջս տեսութեան գնացի, առաջին բանը, որ աշքովս ընկաւ, զա նրա դրան վրայ կպցրած այցկարտըն էր՝ «բժիշկ Արաքսեան»։ Ինձ էլ բան պէտք էր, «բժիշկ Արաքսեան» պոռաւովներս ընկայ սենեակ։ Նա մի փոքր կարմրեց, ժրպտաց, ապա ձեռքերը շփեց գոհութեամբ։

—Հը, մեր տղայ, լաւ ես շտապիկ։

—Ըտապել, ինչու, միթէ մենք այժմ բժիշկ չենք, —պատասխանեց նա մի առանձին ինքնարաւականութեամբ։

—Բժիշկներ ենք, միայն իմ դրան վրայ այդպիսի այցկարտ չըկայ, և ես կարողացայ քննել այս գիշեր, իսկ դու, ինչպէս երեւում է, չէր կարող առանց դրան քննել, —պատասխանեցի ես ծիծաղելով։

—Հանագով ասացիր, բայց հաւատացած եղիր, որ ես վաղուց այնպէս հանգիստ չէի քննել, ինչպէս այս գիշեր ընեցի։

—Եւ երազներ էլ տեսար։

—Եւ երազներ էլ տեսայ։

—Սիրուն, գրաւիշ երազներ։

—Օ՛, չափազանց գրաւիշ։

—Ճիշտ այնպիսի երազներ, որոնց մասին այնքան խօսում էիր ուսանողութեանդ ժամանակ և որոնց հասնելը քո կեանիրիդ

նպատակ ես ընարել, հարուստ աղջիկ, շըքեղ տուն, կառք։

—Ճիշտ այդպիսիները՝ հարուստ աղջիկ, շքեղ տուն, կառք։

—Ուրեմն այն քամիները գես զլիիցըդդ շեն գուրս եկել։

—Քամիներ, խեցի, —վրայ բերեց նա այս անգամ կատարեալ լրջութեամբ։ —քամիները քո գլխումն են, եթէ կամենում ես, իսկ ես տեսնում եմ կեանքը՝ ինչպէս որ նա կայ, ինչպէս եղել է և պիտի լինի։ Ես ապրել եմ ուզում, դա իմ իրաւունքն է, ինչպէս և ամենի իրաւունքն է։ Երբ ես տարիների ընթացքում շան պէս չարշարուում էի, պանիր ու հացով էի կերակրուում, անքուն գիշերներ անցկացնում հաստ հատորների վրայ, հնացած գիակներ կտրատում և քրբում, այդ իմ գժուխային կեանքի շըքջանում ես ոչ որից պահանջ չունեցալ, ոչ ոք ինձանով շըհետաքրքրուեց էլ, իրաւունք ունեին, այժմ էլ հերթն իմն է, և ես պիտի ապրեմ, պիտի ապրեմ։ Դրա համար եմ չարշարուել, դրա համար եմ սովորել։ Զարիք շեմ անի ոչ որի, անազնուութիւն շեմ անի երբէք, կը բժշկեմ՝ դա իմ պարագն է, վարձ կը վերցնեմ՝ դա էլ իմ իրաւունքն

է. ահա իմ բարոյական սկզբունքները:

— Խակ եթէ մարդը մեռնում է և չի ուզում փող տալ, բժիշկ կանչել, որովհետեւ տպէտ է, բժշկութեան մասին հասկացողութիւն չունի, կամ եթէ ուզում է բժշկուել, հասկանում է բժշկութեան արժէքը, բայց միջոց չունի:

— Փոյթս չէ. թող մեռնի. ուրիշ կերպ չի էլ կարող լինել. կեանքն այդպէս է. կամ ես պէտք է ինձ զոհ բերեմ այդպիսիներին, կեանքո դարձնեմ անվերջ գառնութիւնների, չընսահատաւած զոհերի մի շարք և ոչընչանամ առանց ապրելու, կամ նըանք պիտի ջախջախուեն կեանքի անողոք, անխուսափելի չարիքի առաջ: Ընարութիւնը դժուար չէ. ես ապրել եմ ուզում, ինչպէս ամեն մի էակ տիեզերքի վրայ ապրել է ուզում: Հասարակական պիրամիդի շերտերում պայքարը եռում է. անհատներ ու զառակարգեր աշխատում են վեր բարձրանալ, ոմանք մնում են իրանց նոր գրաւած տեղերում, ուրիշները վայր են զլորում, հզօրներն ապրում են, թոյլերը խեղդում, արդարացնելով «վայ յաղթուածին» ասացուածքը: Ասա, ինչ ուզում ես, բայց կեանքն այսպէս է. կոխու, կոխու...

— Թաղ այդ, — ընդհատեցի նըան, — դա շատ հին երգ է, և դու հարիւրաւոր անդամ կը կնել ես քո այդ վայրենի թեօրիաները, մոռանալով որ փիլիսոփայութեան վերջին խօսքը քեզ չի պատկանում բարերազգաբար:

— Լաւ, կը թողինեմ, բայց այն ժամանակ դու էլ խօսք տուր դադարեցնել այս վէճը, որ սկսում է ձանձրալի դառնալ, ուրովհետեւ շատ հին վէճ է և ոչ մի օգուտ չունի. հաւատացնում եմ քեզ, քո փաստերն անզօր են փոխել իմ հայեացքները կեանքի վրայ: Խօսենք ուրիշ բաների մասին:

— Թող այդպէս լինի, — պատասխանեցի իս:

Արդարե, դա մի շատ հին վէճ էր: Ընկերս մի յամառ նիւթապաշտ էր և ամենից շատ հետաքրքրում էր այդ նիւթապաշտական գալրոցի փիլիսոփաներով, այնտեղից էլ բաղել էր իր կեանքի բարոյական սկզբունքները: Տարիների ընթացքում անթիւ անգամ մենք վիճել էինք, երբեմն նոյն իսկ խռովել իրարից: Նա ծաղրել էր իմ ալարուիստ գաղափարները, ինձ անուանել էր ֆանտազեօր, ես նըան անուանել էի կարիերիստ, ափերիստ, նիւթապաշտ. խռովել

Եինք իրարից, բայց կրկին հաշտուել, կըրկին մնացել լաւ ընկերներ: Վէճ յարուցանողը միշտ ես էր լինում, յարձակում էի առաջինը ես, և դա իր պատճառն ունէր. ինձ միշտ թւում էր, թէ ես պիտի յաջողցնեմ նրա գլխից հանել այնքան չոք նիւթապատճական գոյափարները, և անվիրջ փորձեր էի անսամ, ընկերական մի անխզելի կապով կապւած էր նրան. սիրում էր, որովհետեւ ինձ թւում էր, որ նրա սիրաը բարի է, շիտակ, և որ կեանքի դառնութիւններն են նրան այդպէս շարացրել, նըրա մէջ թուլացրել, բայց ոչ իսպառ ջընջել, ազնիւ զնհեր բերելու ձգտումները: Եւ արդարե, նա խիստ շատ էր տանջուել մինչեւ աւարտելլը. իր բոլոր չանքերը մի որևէ նիւթական նպաստ ստանալ սւաման ընթացքում՝ ապարդին էին անցել, և այժմ կասես հաշիւ էր պահանջում կեանքից իր քաշած նեղութեան, իր կրած խեղճութեան համար:

Սակայն իմ ջանքերն ըստ երևյթին ի զուր անցան: Եւ սա վերջին անգամն էր, որ ես նրա հետ վիճեցի նոյն ինդքի մասին: Թողեցի, որ կեանքը ինըն ասի նրան ան, ինչ ես աշխատում էր հատկացնել: Եւ-

նուհետեւ ամեն անդամ, երբ ես գալիս էի նրան այցելութեան, բարձրաձայն կանչում էի դոնից «բժիշկ Արաքսեան», և ապա մենք սկսում էինք խօսել բոլորովին այլ նիւթերի մասին, ծիծաղում էինք, զուարձանում և բաժանում:

Մեր կեանքի այն շրջանն էր, երբ մարդոց ուսանող է, ոչ աղատ, հասուն մարդ: Դեռ սենեակը անկարգ, ծխով լի, գեռ սեղանի վրայ լիմոնի և պապիրոսի կտորներ, զեռ թէյի բաժակներն այս ու այն կոզմ գըլքերին խառն, անկորինը ճմռոտած, շորերը թափփուած, խօսակցութիւնը զուարձալի, հանաքները՝ անվերջ: Հին հոգսերից, քննութիւններ անցնելու գժուաբութիւններից պըծած, նոր կեանքի հոգսերին, դառնութիւններին անծանօթ, կամ երիտասարդ ոյժերի, կարողութեան վրայ վստահ հեղնութեամբ, հպարտութեամբ ապագայիննայելով՝ մենք անց էինք կացնում մեր կեանքի այդ անցողական շրջանը:

Լաւ օրեր էին:

Մի անգամ, երբ մենք գարձեալ ուրախ ուրախ խօսում էինք, յանկարծ հարեւան սենեակից լսուեց մի մանկական ձայն, որ կարդում էր գիրկապ անելով:

«Քը-ա-զը, բադ- րը-ա-շը, բաշ- բը-ու-նը, բան»:

—Ռ' չ- բը-ու-ն, լուն,—սպղեց երեխա-
յի սխալը մի այլ հաստ ձայն, որ ըստ երե-
տյթին դասատուի ձայնն էր:

—Քը-ու-ն, բուն,—շարունակեց երե-
խան.—աը-ու-ն, տուն:

—Լաւ է, այժմ գու ասա, զ՞ուշիկ:
—Ճը-ու-ն, չուն,—սկսեց մի այլ աւելի
բարակ մանկական ձայն, —նը-ու-շ, նուշ.
ու-շ, ուշ. նուշ ու չուն:

—Լաւ է, զուշիկ, գու էլ ես լաւ սո-
վորել,—վրայ բերեց նոյն հաստ ձայնը: Ա-
պա նա սկսեց նոր զաս տալ թէ մէկին և
թէ միւսին, կրկնեց, երեքինեց զասը և
զուրս ուղարկեց:

Մենք երկուսով էի, մեզ անհասկանա-
լի մի պատճառով, ամեն բան թողած, ու-
շի ուշով լուրմ էինք, ինչ որ կատարելում
էր բարակ պատի միւս կողմում:

Քիչ յետոյ, մենք տեսանք, թէ ինչ-
պէս մէկը զուրս եկաւ հարեան սենեակից,
անցաւ մեր լուսամուտի առաջից: Դա երե-
ւի դասատուն էր. մի երիտասարդ մարդ,
խունացած վերարկուսվ, որ նա խնամքով
կոճկել էր վերից վայր, և կարծես մըսում:

էր, թէև աշնանային տաք օրեր էին. զը-
խարկը խորը քաշած ճակատին՝ դէմքի պըօ-
ֆիլը հազիւ տեսանք. դա մի գունատ, նի-
հար երիտասարդ էր: Նա անցաւ, խկ հա-
րեան սենեակում ձայները չըդադարեցին.
երկու մանուկներին այժմ սովորում էին, ի-
րար օղուում. կը-ա-տը-ու, կատու. կը-ա-շի-
կաշի. ասում էր մէկը. կը-ու-ա, կուտ. ա-
սում էր միւսը. երբեմն էլ երկի ձայները
խառնում էին իրար, և էլ ոչինչ չէր հաս-
կացում, բայց մենք շարունակում էինք լը-
սել լուռ, խորասուլուած...

Օրեր անցան, նոյն ձայները, համա-
րեա միւսնոյն եղանակով, մօտաւորապէս մի-
նենոյն ժամերին, լսում էին հարեան սենեա-
կից. պարզ էր, որ մէկը կանոնաւորապէս
զաս էր տալիս երկու մանուկներին: Միակ
փոփոխութիւնը, որ նկատում էր, այդ այն
էր, որ ուսուցիչն օր աւուր աւելի և աւելի
էր հազում և շատ անդամ ստիպուած: Էր
ընդհատել իր արտասանած վանկերը՝ իթ
չոր հազը դադարեցնելու համար. ապա կըր-
կին սկսում էր նոյն համբերութեամբ, կըրկ-
նում էր, սովորեցնում էր, յետոյ զուրս զը-
նում, թողնելով որ երեխաները թոթովին
իրանց դասերը:

Կամաց կամաց մենք ընտելացանք այս
բոլորին. էլ չէինք ականջ դնում, երբեմն
էլ նոյն-իսկ սրախօսութիւնների տռարկայ
էինք դարձնում երեխաների թոթովանքը,
նրանց արտասանութիւնները, կամ ուսուց-
չի այս ու այն խօսքը. օրինակ՝ «Ճնշիկ»,
դու խելօք ես, Գարեգինն այսօր խելօք
չի», կամ «Չեր երկուսին էլ սիրում եմ,
երկուսդ էլ խելօք էք»; Եւ ուսուցիչն այս
խօսքերն արտասանում էր այնպիսի հայ-
րական քնքութեամբ, որ անհնարին էր
ուշք չըդարձնել: Ջուտով այդ էլ մեզ
ձանձրացըեց, մենք չըգիտէինք՝ ով է այդ
ուսուցիչը, նոյն-իսկ մուացութեան տուինք
նրան, լուսամուտի առաջից անցնելիս չէինք
էլ նայում վրան:

Այսպէս անցան մի քանի օրեր և շա-
բաթներ: Բայց վերջին օրերը երեխաների
ձայնն էր լսում միայն, ուսուցիչն այլ ես
չէր անցնում լուսամուտի առաջից, և նա
էլ դաս չէր տալիս, այլ հագում էր...

Նախանձ էլ ուժուցանուց պահ սկսած
անհանձնական վեճի հարցեալ են մազու-
րու անդրս պատճեանու հայութ ու պատճեան վեճա-
նու անդրս պահ ու այլ պահ ու պատճեան վեճա-
նու անդրս պահ ու այլ պահ ու պատճեան վեճա-

II

Այն օրուանից, երբ տեղի սևնեցան
պատմութեանս նիւթը կազմող դէպքերը,
տամնեակ տարիներ են անցել, բայց ես
զեռ յիշում եմ բոլորն ամենայն մանրա-
մասնութեամբ. և դա առանց պատճառի չէ:
Մարդիկ չեն մոռանում իրանց մանկութեան
յիշումութիւնները. կեանքի արշալոյսին ա-
մեն մի երեսյթ, ամեն մի դէպք ոչ միայն
նոր է, հապա և զարմանալի է մանկան հա-
մար և խորը կերպով աղդում է նրա կոյս
մտքի, երեակայութեան վրայ, յաւիտեան
չըջնջուելու համար: Իմ կեանքի երկրորդ
չըջնի արշալոյսին ես էլ մի մանուկ էի,
մի հասակ առած մանուկ, որ զարմանքով
էր տեսնում աշխարհը, մարդկանց, կեան-
քըն իր չար ու բարի կողմերով, և որքան
շատ բան կար անծանօթ, զարմանալի: Սա-
կայն այդ բոլոր նորութիւններից, բոլոր
ուշագլաւ երեսյթներից ոչ մէկն այնպէս
չըցնցեց իմ երեակայութիւնը, ոչ մէկն

այնպէս խորը շըտպաւորուեց իմ մտքում,
որքան իմ ընկերոջ՝ բժիշկ Արաքսեանի մէջ
տեղի ունեցած զարմանալի հոգեկան փո-
փոխութիւնը: Դա մի դէպք չէր, այլ մի ամ-
բողջ աշխարհ, մի ամբողջ կեանք, մի ան-
ձանօթ՝ քիչ հասկանալի կեանք, որ յան-
կարծ բացուեց իմ ասած: Ես, որ կարծում
էի շնորհիւ իմ դիպլօմի ամեն բան իմա-
նալ, ամեն ինչ հասկանալ, բացատրել, լու-
ծել, յանկարծ ինձ դպացի աշակերտի, ա-
մենապէտ, թոյլ աշակերտի կացութեան
մէջ:

Այն օրը, լաւ յիշում եմ, մռայլ թըլս-
պոտ անձրեային օր Էր: Յանաստեղծներն
իրանց պատկերաւոր նկարագրութիւնների
մէջ սիրում են արտաքին բնութեան և
մարդկային հոգու պատկերների մէջ տիսուր
կամ ուրախ զուրադիպութիւն գանել: Սա-
կայն այդ օրուայ մռայլը բոլորովին համա-
պատասխան չէր իմ սրտին. բնութիւնն ա-
սես սպաւոր էր, արտասում էր մօտալուտ
ձմբան երկիրդից, իսկ ես ուրախ էի և ոիր-
տըս լի հրճուանքով: Տէր Աստուած, ուրիշ
կերպ չէր ել կարսդ լինել, մի ամիս շը-
կար աւարտել էի, և արդէն լաւ պաշտօն
ունենալու բաւական զրական յոյսեր կային:

Եւ այսպէս ես գնում էի ընկերոջս
մօտ մտմաւլով իմ ապագայի մասին: Ես
ընկերոջս պէս նիւթապաշտ չէի. իմ բոլոր
երջանկութիւննը կայանում էր իմ փառասի-
րութեան մէջ. Ես ուզում էի պաշտուել այն
զոհերի գնով, որ եռ պատրաստ էի յանձն
առնել ժողովրդի համար: Ես ուզում էի, որ
իմ մասին ապագայում գրեն, խօսեն, պատ-
մեն, որ ինձ մատով ցոյց տան, երբ անց-
նելու լինեմ փողոցներով, իսկ այսօքանի հա-
մար ես պատրաստ էի լուսամուտից վայր
նետուել վլուխս վշրել: Մտածելով այս բո-
լորի մասին, ես երբեմն ընկնում էի էքս-
տափի մէջ, զգում էի, որ ընդունակ եմ ամեն-
ամիելազար զոհողութիւններ յանձն առնել.
անկեղծ էի ոգեսրութեանս բոպէներում,
և վէճերի ժամանակ իմ խօսքերը հնչւում
էին ուժով, համոզիչ շեշտով: Ընկերներս
ինձ ալտրուիստ էին համարում. այդ ածա-
կանը ես ընդունում էի հոգարտութեամբ, և
հաստատ որոշել էի կեանքի մէջ էլ փառ-
քով կրել:

Ես երեակայում էի, թէ ինչպէս կը
մանեմ կորած, մոռացուած խրճիթները,
մութ նկուղները, թէ ինչպէս կը սրբեմ
այնտեղ ցաւերի մէջ տառապղների ար-

ցունքներն իմ բժշկական հմտութեամբ և իմ նիւթական զոհերով, և եսր գուրս գրնալու լինեմ ինչպէս կը լսեմ յետեիցս աղօթքի և օրհնութեան մրմունջներ. օ՛, դա մի ամբողջ երանութիւն էր ինձ համար:

Եւ ուրիշ շատ լւա բաներ էի մատում ես, երբ հասայ ընկերոջս ընակարանին: Արդէն սլատրաստում էի ըստ իմ սովորականին «բժ. Արաքսեան» գոռալով ներս ընկնել, երբ ականջիս հասած մի ձայն ինձ ստիպեց սառած կանդ առնել:

— «Կը ու-տ, կուտ, կը-ա-շը-ի, կաշխ. նոյն մանկական ձայները, որ սովորաբար միշտ լսում էին հարեան սենեակից. բայց ինչ որ ինձ ապշեցրեց այսօր, այդ այն էր, որ այս անկամ ձայները գալիս էին ընկերոջս սենեակից, բժիշկ Արաքսեանի սենեակից:

Երկոյթն այնքան տարօրինակ էր, որ ես մի բոպէ կարծեցի, թէ լսողութիւնս ինձ խարում է, և թէ գուցէ ես սխալմամբ հարեան սենեակի դրան առաջ եմ գուրս եկել:

Բայց անկարելի էր. դրան վրայ շատ պարզ երևում էր իմ հանաքների և հեգնութեան մշտական առարկան, այցկարտը՝ «բժիշկ Արաքսեան». ես ինքս ինձ հա-

(1935-2002) ՀՀԿ-ՀՀՕՀ

մողելու համար ակամայ նոյն-իոնկ կարդացի՝ «բժիշկ Արաքսեան»: Յետոյ մտածեցի, թէ մի գուցէ երեխան կարդում է հարեան սենեակում, և ես այսուեղ ձայնն եմ լսում, մօտեցայ կամացուկ, ականջս դրի ընկերու ջըս դրան կտպէքի վրայ. ոչ մի կասկած չըկար. «Կը-ու-շը-տ, կուչա. կը-ա-շը-ի, կաշի». պարզ և սրաց լսում էր մանկական ձայնը ընկերոջս սենեակից: Այնուամենայնիւ ես բոլորսին շրհամոզւեցի, և դուռը չըեցի ներս մտայ: Եթէ այդ վայրկեանին բժիշկ Արաքսեանը յանկարծ մի մահակի հարուածիցներ գլխիս, զուցէ ես այնքան շրպարմանայի, որքան զարմացրեց ինձ տեսածս, և ես սառած մնացի զրանը կպած, տռանց առաջանալու, տռանց մի բառ ասելու. և հայում էի: Ընկերս նստել էր սեղանի առաջ, իր երկու կողմում տեղ էին բանել երկու երեխաներ, մի եօթ տարեկան տղայ և մի ինն տարեկան աղջիկ, զանգրահեր գլուխներով: Երկու փոքրիկ գեղջուկ դէմքեր էին, վախվսելով, անվստահ նայեցին ինձ և կրկն գլուխները քաշ ձգեցին իրանց փոքրիկ զրբերի վրայ՝ կրկնելով իրանց անվերջանալի վանկերը. «Կա-տու, կաշի, շամամ»: Բժիշկը լուրջ, հանդիսաւոր դէմք ու-



նէր, նա վերև նայեց, հաղիւ ձեռքով ինձ
նշան արաւ, որ նստեմ, և շարունակեց.

— ծնւշիկ, այժմ դու կարդա:

«Կատու, կաշի, շամամ», — շարունա-
կեց երեխան: Զընայելով նրա հարաւին,
ես նստել չըկարողացայ. ես ապշած էի.
ծիծաղել չէի համարձակուում. պատկերի
լրջութիւնն ինձ կաշկանդել էր. հարց տալ,
խօսել նոյնպէս սիրտ չէի անում, վախե-
նում էի խանգարել, իսկ նստելու մասին
չէի էլ մտածում. ես ապշել էի, սառած
մնացել իմ տեղում, զլխարկը ձեռքիս, աշ-
քերս չուած նայում էի այս պատկերին, հա-
յում էի և էլ չէի մտածում. երազ էր...

Որչափ մնացի ես այսպէս կանգնած՝
շեմ յիշում, միայն երբ թժիշկը վերջացրեց
դասը, երեխաներին դուրս ուղարկեց խա-
ղալու, նրանք մօտեցան դրանը գրքերը
ձեռներին, այն ժամանակ միայն ես հե-
ռացայ դռնից:

— Զարմացած ես, այնպէս չէ, — ասաց
թժիշկը երեսիս ժպտալով:

— Զարմացած... դու այն ասան խելքդ
տեղն է, նախորդ գիշեր քեզ հետ մի բան
չի պատահել:

Պատասխանի փոխարքն նա մի պինդ

ծիծաղեց, ապա մի առ ժամանակ երկոսվ
էլ լուռ կացանք:

— Լսիր, — դարձաւ նա ինձ, երբ ես
տեղ բռնեցի նրա դէմ ու դէմ շարունակ
հարցական հայեացքս իր դէմքին ուղղած.
— լսիր ինձ և մի զարմանաբ: Երբ այնտեղ,
համալսարանական նստարանի վրայ դու և
քո խելքի, քո սկզբունքների մարդիկ խօ-
սում էիր ժողովրդից, նրա ցաւերից, խօ-
սում էիր ալտրուիզմից, ծրագրում էիր ձեր
անձնազոհ գործունէութիւնը, գիտակ էիր
համարում ձեզ կեանքի համար, պատրաս-
տուած նրա ձախորդութիւնների դէմ գնա-
լու, նրան ընկճելու ձեր բարոյական ոյժով,
ձեր անձնութիւնեամբ, դուք բոլորդ էլ սուտ
էիր խօսում առանց իմանալու, դուք իլլիւ-
զիաների մէջ էիր, դուք անկեղծ էիր բո-
պէապէս: Զեր զիմացկունութեան, ձեր ան-
կեղծութեան, ձեր անձնազոհութեան յա-
րաւաեռութիւնը կեանքը միայն կարող է ա-
պացուցանել, հաստատել, բայց դուք իրա-
ւունք էիր համարում ձեզ արդէն հասարա-
կական անձնազոհ գործիչներ համարել, իսկ
ինձ մատերիալիստ, կարրիերիստ: Իսկ երբ
ես պնդում էի, որ ինձանից դուրս աշխար-
հը զոյութիւն չունի ինձ համար, որ ես աշ-

քերս կը փակեմ աշխարհի ցաւերի առաջ,
կը բաղեմ վարդերը, խոյս տալով փշերից,
և էլ անզիտակցաբար սուտ էի ասում, և
մենք բոլորս էլ երեխաներ էինք: Աշխար-
հն, կեանիք աչ գուք էիք ճանաշում, աչ ես.
այժմ էլ շենք ճանաշում, և դեռ յայտնի չէ,
թէ նրբ կը ճանաշենք, և երբ որ ճանաշենք,
ինչ կը շինենք: Բայց ուղնում ես, ես քեզ
ցոյց տամ, թէ ովք է ճանաշում աշխարհ,
ովք է առանց աղմուկի լուծել ձեր բոլոր
թէօրիաները, ովք է մուացութեան, խա-
ւարի, թշուառութեան, ապերախտութեան
մէջ իմ նիւթապաշտութեան հիմքերը քան-
դել և ասանց աղմուկի գծել մի ճանա-
պարհ, որով հագիւ թէ մենք զնալ համար-
ձակուենք, այն տսահճան փշոտ է նա, այն
տսահճան դժուարագնաց է. ասա, ուղնում
ես տեսնել այդ մարդուն:

—Ես քեզ շեմ հասկանում:

—Չես հասկանում. լաւ, ես կաշխա-
տեմ առանց հանելուկների խօսել: Քանի
որ է, որ զու շես եկել ինձ մօտ:

—Երեք օր է կարծեմ:

—Կարճ ժամանակ է, 8էր Աստուած,
բայց այնքան շատ ապրեցի: Թու շատ ժաղ-
րեցիր իմ գրանը կպցըած այդ կարտը. լսիր

այժմ, թէ նա ինչ թանկապին ծառայու-
թիւն մատուցեց ինձ: Հարեան սենեւակում
ապրողը մի գիւղական ուսուցիչ է, այն
մարդկանցից մէկը, որոնց մենք սովոր ենք
«վարժապետ» կէս հեղնական, կէս արհա-
մարհական բառով կնքել. վերջին օրերս
զու նկատեցիր, որ նրա գասախօսելու ձայ-
նըն այլ ես չէր լսում, նա միայն հազում
էր: Նա հիւանդ է, պառկած և առանց օպ-
նութեան, առանց ծանօթների, առանց մի-
ջոցի: Ի՞նչ լաւ, որ նա իմ այցկարտից մի
օր իմացել է, որ իր հարեանը՝ ես բժիշկ
եմ: Երկու օր առաջ նստած էի ունեա-
կումս, երբ զուռս կամացուկ բացուցից, և
շեմքի վրայ յայտնուեց այն փորբիկ աղջի-
կը, որին թիշ առաջ տեսար ինձ մօտ: Նա
մատ և կանգ առաւ, զլուխը քաշ ձկեց ու
մնաց. Տէր Աստուած, այն ինչ զէմք էր. ովք,
որ հոգեբանը, որ բանասաւեղծը, որ նկարի-
չը կարող է նկարագրել մի մանկական զէմք,
ուր գծագրուած ին անմեղութիւն, երկիւդ,
վիշտ, յուսահատութիւն, և բոլորը միասին
կազմում են մի այնպիսի խառնուրդ, մի այն-
պիսի պատկեր, որի առաջ մարդ ակամայ
զլիարկը պիտի հանի, տոեն առտուածու-
թիւնն է ուղարկել իր հրեշտակը քեզ ասելու

ինչոր մոռացուած ճշմարտութիւններ: Ի՞նչ արժեն այդ պատկերի մօտ քո բոլոր ճառենը, բոլոր պերճախօսութիւնները, բոլոր փաստերը, որոնցով դու աշխատում էիր ջրել իմ նիւթապաշտ թէօրիաները, աշխատում էիր ինձ ալտրուիստ դարձնել: 2է, հոգիս, դժբաղդ մանկական արցունքի մի կաթին աւելի համոզիչ, աւելի յուղիչ է, քան ամենահանճարեղ, ամենապերճախօս քարոզները հիմնուած անհերքելի փաստերի վրայ: Չուշիկը, այնպէս է նրա անունը, նայեց ինձ վախիվսելով. երկու կաթիլ արցունք կար կախած սիրուն, անմեղ աշքերից:—«Հայրիկս հիւանդ է»,—ասաց նա և հեկեկալով ծածկեց երեսը: Մի սառը բան անցաւ մարմնովս. ես զողացի, հասկանում ես, ես զողացի այդ խեղճ, այդ թոյլ, զողդոջուն արարածի առաջ: Ինչո՞ւ զողացի, ես խօմ պինդ ներվեր ունեմ. զու այդ գիտես. ես մինչև այժմ էլ չեմ կարողանում հասկանալ, թէ այն ինչ սարսուռ էր, որ անցաւ իմ մարմնով: Ես լուռ վեր կացայ, մօտեցայ երեխային. նա վախենալով էր նայում ինձ. ես շոյեցի զըլուխը, շըգիտեմ ինչ ասացի, կարծեմ բան էլ ասացի, նա սրտապնդուեց, վերև նայեց. ես համոզուած եմ, որ արտասուող հրեշ-

տակն այդպէս կը նայէր իր արցունքի միջից. ես շըկարողացայ համբերել, բանեցի այդ սիրուն գանգրահեր գլուխը, համբուլեցի և կըծքիս սեղմեցի պինդ պինդ. օ՛, ես զեռ երբէք, երբէք այնպէս չէի համբուլել մէկին: Ես առաջին անգամ կիանքում համբուրեցի աշխարհի վիշտը, մերձաւորի ցամ այդ սրբազն, անմեղ դէմքի վրայ: Քիչ յետոյ ես հիւանդի մօտ էի: Նա էր ուղարկել ինձ մօտ երեխային: Հիւանդանալով անյուսութեան և անտէրութեան մէջ, նա մնում է մի առժամանակ առանց խնամքի. ի վերջոյ որոշում է զիմել անծանօթ բժշկի օգնութեանը: Անա երեք օր է ես անց եմ կացնում նրա մօտ ամբողջ ժամեր: Գաւառից, զիւղերից է գալիս. էլ պաշտօն չունի, էլ զըլուց շըկայ. եկել է պաշտօն գանելու համար: Որքան բան ասաց ինձ, ինչե՞ր նկարագրեց, որքան է ապրել այդ մարզը: Խօսում է նա... ձեզ պէս չի խօսում, ընկեր, նա չի երեակայում, նա չի գեղեցկացնում, նա միայն ասում է մերկ, կոպիտ ճշմարտութիւնը. ցաւեր է պատմում, որոնց առաջ ոչինչ են ձեր բոլոր ճոռոմարանութիւնները: 2է, մենք ոչինչ շըգիտենք:

Կուրծքն է հիւանդ իւեղմի. « Կա արեցի,
ինչ որ կարող էի. նկատելով որ նա սառ-
տիկ շաւաւմ է երեխաներին դաս տալ շը-
կարողանալու համար, յանձն առայ պարա-
պել, մինչև որ ինքը կը վեր կենայ, ասա-
ցի նրան, բայց հազիւթէ... Խմ աւաշար-
կութիւնը նրան անչափ ուրախացրեց:

Մի ողորմելի սենեակ էր, ուր ներ-
տարաւ ինձ ընկերու. մի անկողին, երեք ող-
րակի աթոռներ և մի սեղան. ահտ լուր
կարասին:

Մի մաշուած դէմք հազիւ ծրագրւում
էր բարձի սպիտակութեան վրայ, և վեր-
մակի տակ մի նիհար, սոկրացած մարմին:
Խոր ընկած աշքերը հազիւ էին նշմարւում,
խոկ նիհար այտերը մի անախորժ, հիւան-
դուտ կարմրութիւն ունէին: Թաւ, երկար և
սկ մաղերը անհոգ ուղրներով բոլորել էին
կնճռու և զուրս ցցուած ճակատը: Անխը-
նամ ձգած միրուքը խճճուել և ծածկել էր
շըթունքներն ու բերանը, և ամբողջ դէմքը
տանջանքի, յողնածութեան կնիք ունէր վր-
բան: Ճատ ապրած դէմք էր այն, տարի-
ներն անհետ չէին անցել վրայով: Մեղ
տեսնելով նա ժպտաց մի սեռակ թախծա-
լի մեղմութեամբ և այդ ժպտով մի առան-

ձին խորհրդաւորութիւն տուեց այդ թուխ
դէմքին:

—Ընկերս է, նոյնպէս բժիշկ,—ասաց
բժիշկ Արաքսեան, ներկայացնելով ինձ:

—Չատ և շատ ուրախ եմ թէ ձեզ և
թէ նրա համար,—ասաց նա անկողնի տա-
կից՝ զուրս հանելով նիհար, ոսկոտ ձեռ-
քը և մեկնելով մեզ:—Երկու բժիշկ, մի հի-
ւանդ, —շարունակեց նա ժապավով նոյն
թախծալի ժապավ:—Երկու խելքը մէկից
լաւ է, այնպէս չէ. գուցէ կարողանաք
կեանք տալ այս անկենդան մարմնին:

—Ի զուր էք գանգատում,—ասաց ըն-
կերս.—այսօր զուր շատ լաւ էք երեսում,
դէմքերդ շատ ախորժ արտայայտութիւն
ունի:

—Երաւունք ունէք. ճշմարիս որ այ-
սօր լաւ եմ զգում ինձ. միայն այս հազը...
—և ծանօթ, անախորժ հազը կրկին ընդհա-
տեց նրա խօսքը.—բայց այդ էլ ոչինչ, —շա-
րունակեց նա. —քանի տարի է, որ հազում
եմ: Ես այժմ այնքան լաւ եմ, որ կը նըս-
տեմ և մի քիչ կը խօսեմ. խօմ գիտէք, որ
ուսուցիչները շատախօս կը լինեմ, այդ նը-
րանց արուեստն է, որ ի վերջոյ լնաւորու-
թիւն է դառնում. և տարօրինակ էլ չէ, երբ

մարդ խօսում է անընդհատ տասն և եօթ-
տարի:

—Միթէ այդքան ժամանակ դուք
միշտ ուսուցիչ էք եղած:

—Այն, միշտ, շարունակ. մի ամբողջ
կեանք էր, այն էլ անցաւ, և չըդիտեմ մի
բան թողեց յետակից, թէ ոչ. օ՛, կեանքը
շատ է հզօր, և մենք շափաղանց թոյլ, շա-
փաղանց քիչ. պէտք էր մի քանի անգամ
աւելի ավլորել... մի քանի անգամ աւելի
տանջուել գրական հետեւանքների հասնե-
լու համար: Է՞հ, վերջապէս, թողնենք այդ,
ինձ հետաքրքրողն այժմ այդ երկու երե-
խաներն են, որոնց ես այդպէս չէի կամե-
նայ թողնել աշխարհում: Ո՞վ գիտէ, թէ
ինչ կարող է պատահել ինձ հետ, իսկ նը-
րանք մայր էլ չունեն:

—Դեղն ընդունեցիք, —հարցըրեց Արաք-
սեանը:

—Ո՛չ, տուող չեղաւ: Զուշիկը փոր-
ձեց շըկաբողացաւ: Ես էլ, է՞հ, էլ ոյժ չի
մնացել:

Արաքսեանը գլուխն օրօրեց, մօտե-
ցաւ, վերցրեց գեղի որուակը, կաթեցրեց
գդալի մէջ և, քնրշութեամբ բարձրացնե-
լով հիւանդի գլուխը, գեղը խմացրեց:

Հազը վերսկուեց, հիւանդը թռւտացած՝ ընկաւ բարձի վրայ. մենք մնացինք անխօս և նայում էինք: Ես խօսք չեմ գըտնում, իսկ ընկերս չըպիտեմ ինչո՞ւ էս լըռում: Հիւանդը կամաց կամաց աչքերը փակեց և քննեց:

Մենք դուշութեամբ դուքս եկանք, գնացինք ընկերոջն սենեակը, նոտեցինք և շարունակում էինք լուել. խօսել չեր լինում. երկօխս մտքերն էլ փոխադարձաբար իբար համար շատ էին պարզ, որպէս զի պէտք լինէր արտայայտուել:

Լոռութիւնն ընդհատեց Արաքեանը:
—Կը մեռնի, —ասաց նա աչքերը մի կէտի յառած:

—Միթէ:

—Եյն, կը մեռնի, և երկու որբերը...
—Ընտէր, անտիրական կը մնան:

Ընկերս նայեց ինձ մի հայեացքով, որ եւ լաւ հասկանալ չըկարողացայ, բայց որը լու չեր ինձ համար. ես կուզէի, որ նո այդպէս չընայէր ինձ: Նա այսօր բոլորովին տարօրինակ էր, իմ արամազրութիւնը բոլորվին այլ էր, երբ նրա մօտ եկայ, այժմ չը գիտեմ ինչո՞ւ նրա առաջ ես ինքս ինձ լու չեմ զգում, ես՝ որ այնքան տարիներ նրան

խրատում էի երեխայի պէս. Արաքեանն էլ չէր խօսում: Լոռութիւնն ինձ խեղղում էր. ուստի վերիացայ, գիմարկս առայ և զուրս գնացի:

Եսկ ամբողջ օրը ես թափառում էի, և շըպիտիմ ինչի՞ մասին էի մտածում, բայց զիտեմ, որ բարձերի սպիտակութեան վրայ ծրագրուող այն գոռնատ պատկերը և ընկերոջ մուալլ գէմբն ինձ հետեւում էին քայլ առքայլ: Գիշերն էլ լաւ չըքննեցի և միւս օրը վաղ առաւտօտից կրկին հիւրանոց գնացի:

Պատշգամբի վրայ կանգնած էր Արաքեանը, գլուխը յենած սեանը և մուալլ հայեացը գէպի հեռուն ուղղած: Դեռ երբէք ես նրան այդքան տիսուր չէի տեսել: Ոտնաձայնս լսելով նա զլուխն ինձ դարձրեց և, առանց զէմբի արտայայտութիւնը փոխելու, դարձեալ նախորդ օրուայ իշխողի տոնով ասաց.

—Աւելի վաղ կարող էիր զալ:

—Մեռան...

Պատասխանի փոխարէն նա բանեց ձեռքից և ներս տարաւ հիւանդի սենեակը: Ուսուցիչը հոգիվարքի մէջ էր, երկու երեխաները նրա այս ու այն կողմում կծկուած հեկեկում էին:

Արաքեանը մօտեցաւ նրանց հանգը-

տացնելու. հիւանդը բորբոքուած աշքերը գէպի նա դարձեց, ապա նայեց արտասուող երեխաներին երկար, երկար, և երկու կաթիլ արտասուլքներ կախուեցին նրա կոպերից: Ցետոյ ծածկոյթի տակից հանեց գողոջոն ձեռքը և մեկնեց զէպի փոքրիկ ները: Նա էլ չէր խօսում և մահուան համը լեզուով նրանց մեղ էր յանձնում: Արաքսեանը զըկեց երեխաներին, համբուրեց, հիւանդը տեսաւ այդ, հանգստացաւ կարծես, փորձեց ժպտալ ի նշան գոհունակութեան, բայց գունատ շրթունքները միայն ծումունեցին, աշքերը փակուեցին, և անդօք, անկատար ժպիալ յաւիտեան սառեց նրա դէմքին:

Նա մեռաւ:

—Հայրիկ, հայրիկ,—մըմնջում էին որբերը, և Արաքսեանը հեկեկում էր նրանց հետ, իսկ ես տեսարանի վեհութեան առաջ քարացած՝ կանգնել էի ինչ անելս չիմանալով. յիշում եմ սակայն, որ կուզէի մօտենալ, գրկել և համբուրել Արաքսեանին բացականշելով.

—Օ՛, աղնիւ հոգի, ինչ դժուար է եղել ճանաչել մարդկային սիրաը: Բայց դրա փոխարէն ես էլ դառն, դառն արտասուեցի:

Մի օր յետոյ չորս հոգի էինք հետեւում սայլի դագաղին, ես ու ընկերս երկու որբերի

ձեռքից բռնած: Թաղումից վերադարձին Արաքսեանը որբերին իր սենեակում տեղաւորեց, և երբ միքանի օր յետոյ պաշտօն ստանալով ես եկայ նրան վերջին մնաս բարին ասելու, դրաց վերստին լսեցի երեխաների ձայնը «բաղ, նուշ, շուն...»

—Գնաս բարի, —ասաց նա ինձ և շարունակեց դասը. —Ճնշչիկ, դու կարդա:

—Իսկ դու ինչ ես անում, ուր ես ուզում գնալ:

—Ե՞ս... ես չըգիտեմ, ես էլ պաշտօն չեմ վնտում. գնում եմ, երկի մի կտոր հացը պակաս չի լինի. աշխարհը լայն է, ցաւերն անթիւ..., Մնաս բարի...



Ամինարդի պիտութե : Ենուա քիչ ամառ
աւարձ եւ սրբածն ով սկսէցր զմանը պատ
ամառու Շուշը լուսէ ու հմագիլն ով և քնա
պատ միջնակ ամսի մայնդի մարդ խթի ու խոչ
ամս պրամատիկ պատ միասողմի ըստը , ոյ

... ճառ ճառ ըստը ով ունչ և նմի ամ ըստը . գիստ սամի
ապրանք ուր թիւնին . պար ունչուն

առ ու պատ համան ու ըստ ուր քնա .

ըստը նոյս պատուաց ու ունչ
ունչ ըստը մի մաս ան եւուր մասուսէ նաշ
ապա ամս ունչուն . մամի ոչ սուսուր ոք
... ըստը սամին ... ավելիս մահ

ՀՀ Ազգային գրադարան



NL0585439

